

ՀԱՅՐԵՆԻՔԸ ՈՐՊԵՍ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳ

Օտար երկիրը հայրենիք չի դառնա

Գյոթե

Ինչպես ապրել չի կարելի առանց հացի,

այնպես էլ անհնարին է ապրել առանց Հայրենիքի

Հյուզո

Իսկ ո՞րն է այդ Տի(մեծ)եզերքում Հայրենի եզերքի՝ Հայրենիքի տեղն ու դերը: Դա մարդկանց կողմից ստեղծված քնարական հորինվածք է, թե՞ այն որոշակի իմաստ ու խորհուրդ ունի: Եթե՝ այո, ապա որո՞նք են «հայրենիք» հասկացության հատկանիշները, որոնք հայրենասեր (և ոչ միայն) մարդկանց մեջ ծնունդ են որոշակի զգացումներ ու զգացմունքներ, որոնց առկայության պարագայում մարդը չի կարող երկար ապրել իր հայրենիքից հեռու: *«Առանց Հայրենիքի մարդը ժամանակի ու տարածության պատահականությունների քմահաճույքին մատնված ավազահատիկ է»*, - գրում է ֆրանսիացի գրող Ժ. Լակոբրերը /1802-1861թթ./:

Համոզված կարելի է ասել, որ յուրաքանչյուր մարդու համար Հայրենիքը Տիեզերքի մանրակերտն է: Ինչպես Տիեզերքում, Հայրենիք կոչվող տարածքում ևս հողը, ջուրը, օդը, երկինքը, ժողովուրդը, բուսականությունն ու կենդանական աշխարհն օրգանական կապի մեջ են, լրացնում են միմյանց՝ կազմելով մեկ ամբողջական ֆունկցիոնալ համակարգ: Տվյալ հողում աճած բուսականությունը իր ձևաբանական, կենսաքիմիական ու ֆիզիոլոգիական հատկություններով տարբերվում է այլ տեղում աճած նույն բույսից: Դա պայմանավորված է տվյալ հողի քիմիական ու կառուցվածքային հատկություններով: Մարդն ուրիշ տեղ չի գտնում այդտեղ աճած պտուղների ու բանջարեղենի իրեն ծանոթ համն ու բույրը: Ավանդական բժշկությամբ զբաղվողները գիտեն, որ օտար երկրից ներմուծված պտուղ-բանջարեղենը որքան էլ ինքնին հարուստ լինի սննդատար նյութերով, վիտամիններով, չի կարող մարդուն օգնել այնպես, ինչպես այդ երկրի մարդկանց: Այն ուղղակի չի համապատասխանում նրանց օրգանիզմի ֆիզիոլոգիային, այսինքն՝ այն խորթ է տվյալ ֆունկցիոնալ համակարգին:

Այդ համակարգի առանցքը կազմում է տվյալ տարածքում ապրող ժողովրդի յուրաքանչյուր անհատը, քանի որ Հայրենիք- երևույթը իմաստավորվում է անհատի պատկերացումներով: Տվյալ երկրի հողը կրում է այդտեղ ապրող ժողովրդի պատմական հիշողությունը, որն իր որոշակի տեղն ունի անհատների ենթագիտակցության մեջ: *«Մեր արմատները թերևս խորն են ավելի, քան բարձր է մեր սաղարթը: Ով պատմություն ունի, չի կարող հետ չնայել, ով անցյալ ունի, չի կարող հիշողություն չունենալ»*, - գրում է Պ. Սևակը: Այդ հիշողությունը քաղաքական որոշ հանգամանքներում կարող է դուրս գալ մարդկանց ենթագիտակցությունից և մղել նրանց վարքագծային համապատասխան դրսևորումների:

Հայրենի հողն ունի իր հոգին, որը միաձույլ է այդ հողի վրա ապրող մարդու հոգու հետ և սնունդ է «հայրենասիրություն» կոչվող մարդկային զգացմունքը: *«Հողը մի կենդանի էակ է, նա ունի իր հոգին և առանց հայրենիքի, առանց հարազատ հողի հետ սերտ կապի մարդ չի կարող գտնել իրեն, իր հոգին...»*, - գրում է Ցիցերոնը, իսկ Վոլտերը ասում է. *«Հայրենիքը մի եզերք է, ուր գերի է հոգին»*: Կյանքի հոգևոր ոլորտն ուսումնասիրողները պնդում են, որ եթե մարդկանց սնես այլ երկրի հացով

ու սնունդով, նրանք կկորցնեն հայրենասիրության զգացումը: Ակամայից մտածում ես՝ արդյոք դա՞ չէ պատճառը, որ հիմա հայերը այդքան հեշտությամբ են հեռանում իրենց հայրենիքից, չէ՞ որ վերջին տասնամյակներում ստիպված էինք ընդունել օտարամոտ սննդամթերք: Դա ռազմավարական հնարք է, որի մասին շատերը չգիտեն: Ժամանակին Րաֆֆին զգուշացնում էր. «Օտարի օգնությունից մեզ շահ չկա: Դժբախտ է այն ազգը և դժբախտ կմնա, որ օտարի օգնության կարոտ լինի: Ոչ ոք իր հոգու համար մեզ չի օգնի. նա պետք է տասը բան առնե մեզանից, որ մի բան տա»:

«Սերը դեպի հայրենիքը քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքն է», - նշում է Նապոլեոն I-ը: Հայրենասիրությունը համարելով մարդկային առաքինությունների թագն ու պսակը՝ Գարեգին Նժդեհը գրում է. *«Մարդկային բարոյական հատկություններն իր մեջ միացնող այդ գերագույն առաքինությունն է ազգերի գոյության անհրաժեշտ պայմանը և անսպառ աղբյուրը նրանց ուժի ու մեծության: ...Սեր ժողովուրդն առանց հայրենասիրության այն է, ինչ որ մի մարմին առանց հոգու»*¹: Հայրենիքի, Հայրենի հողի նկատմամբ ունեցած անմնացորդ սերը մարդկանց ոգեշնչում է ու մղում ստեղծագործական աշխատանքի: Յուրաքանչյուր ազգի մշակութային գործիչները նախ և առաջ մեծ հայրենասերներ են: Հայրենիքի հողն ու ջուրը, արևն ու երկինքը, բնությունն ու մարդիկ ստեղծագործողի համար հոգևոր ներշնչանքի անսպառ աղբյուր են: *«Իմ խորհուրդ խորհնը եղել է իմ սերը դեպի մայր հողն ու ժողովուրդը: Այդ սերն արտահայտված է իմ արվեստով, որն իմ հոգին է»*, - գրում է Մ. Սարյանը:

Երիտասարդ սերունդն ազգի ներկայի ու անցյալի մտածողների գրական, գեղարվեստական ստեղծագործություններին, իր երկրի մշակույթին ծանոթանալով, իր ժողովրդի բազմադարյա հոգևոր արմատներից սնվելով է ստանում ազգային դաստիարակություն: Այդ պրոցեսի հետևողական ընթացքն է ապահովում ազգային ժառանգականության շարունակականությունը: Ազգի պատմությանը տեղյակ, ազգի հիշողությունը գենետիկական մակարդակով կրող, ազգի ապագայով մտահոգված մարդկանց գիտակցությունից է ձևավորվում Հայրենիքի համընդհանուր գիտակցությունը, տվյալ երկրի նոստալգիան՝ ուղեղը, որտեղ կուտակվում, մշակվում և համապատասխան հրահանգներ են ուղարկվում ազգի յուրաքանչյուր անդամին: Նա էլ իր հերթին լծվում է ազգաշեն ու ազգանորոգ գործին: **«Մեկ ազգ, մեկ մշակույթ և մեկ հավատք»** կարգախոսը իր խորքում հենց այդ առաքելությունն ունի և հանդիսանում է ազգի պահպանման հիմքը:

Ազգապահպանման գործում կարևորելով մշակույթի դերը, ֆրանսիացի գրող-հրապարակախոս Ժան դ'Օրմեսոնը գրում է. *«Եթե մենք չպայքարենք մեր մշակույթի յուրահատուկ ձևերի, մեր լեզվի պահպանման համար գոնե մեր երկրում, ապա կ'ամերիկանացվենք: Եվ դա իրապես մեզ սպառնում է: Ես, օրինակ, շատ լավ եմ վերաբերվում ամերիկացիներին, բայց չեմ ուզում լինել նրանց նման, ես ֆրանսիացի եմ: ...Որպեսզի աշխարհում չտարածվի ինչ-որ անորոշ մարդկային զանգված, անհրաժեշտ է հարգել ու պահպանել յուրաքանչյուր ազգի ինքնատիպությունն ու անկախությունը»*²:

Եթե այսօր հզոր երկրներն իրենց ազգային դիմագիծն ու անկախությունը պահպանելու համար ունեն մշակույթի պահպանության խնդիր, ապա մենք առավել ևս ունենք դրանով մտահոգվելու առիթներ:

Ազգի մշակույթն ու հավատքը ձևավորում են ազգային ոգին, որն ազգի կյանքում, նրա պահպանման, զարգացման և առաջընթացի շարժիչ ուժն է հանդիսանում: Բզկտիր ազգի մարմինը,

¹ Գարեգին Նժդեհ, *Հատընտիր*, Երևան, «Հայաստան», 2001, էջ 36-37:

² *Агаджанян Н. А., Горожанин Л. С. Вступая в XXI век: кризис культуры интеллигенция*. Иваново-Москва, 2005, стр. 38.

եթե առողջ է նրա ոգին, նա կվերածնվի: «Ոգին է կռում ազգերի ճակատագիրը: Փոխվեց մեկը՝ փոխվում է և մյուսը: Ուր մեռած է հոգին՝ այնտեղ մեռյալ է կյանքը: Ազգային ոգի. ահա՛ գերագույն հերոսը, միակը, մեր պատմության անհվը, մեր հավաքական ճակատագիրը վարող հերոսը: ...Անհատ հերոսները ոչ այլ ինչ են, եթե ոչ միայն անձնավորողները այդ ոգու: Մեռնում են հերոսները՝ Մանուելները, Մուշեղները, Վարդանները, մնում է, սակայն, նրանց ոգին, որն իր մարմնավորումը գտնելով այլ հերոսների մեջ, շարունակում է ապրել ու ներգործել: ...Ոգու համար չկա ներկա, անցյալ և ապագա. ոգին միշտ գործուն ներկայություն է, էական է մարդու և հանրությանց կյանքում»³:

Իսկ վերջերս Հայաստան թափանցած բազմաթիվ աղանդները, մեր ազգային հոգեկերտվածքին խորթ մշակութային պսևոտ արժեքները կամ ավելի ճիշտ՝ «չարժեքները» կոչված են աղավաղելու մեր ազգային մտածողությունը, խաթարելու մեր ազգային ոգին: Դա մեր երկրի սեփական նոսաֆերայուն առաջացնում է քայքայված՝ նեկրոզային օջախներ, որոնք ազգային գաղափարախոսության բացակայության պայմաններում՝ ցրված սկլերոզի նման նախ քայքայում են ազգային համընդհանուր ուղեղը: Այդ ախտով հիվանդ ժողովուրդը կորցնում է իր ազգային նկարագիրը, դառնալով ապազգային, կոսմոպոլիտ մարդկանց մի բազմություն, մարդիկ, որոնք պատեհ առիթի դեպքում պատրաստ են հեշտությամբ լքելու իրենց պապենական հողը, իրենց Հայրենիքը: Գլուբալացում ծրագրավորողները լավ տիրապետում են ազգերին այդ ախտով վարակելու տեխնոլոգիաներին և հետևողականորեն, քայլ առ քայլ նրանց (փոքր ազգերին՝ ավելի հեշտ) տանում են դեպի կործանում՝ զրկելով նրանց պատմական հիշողությունից: Եվ եթե ազգը պատրաստ չէ դիմակայելու դրան և չի կարողանում մշակել հարմարվողական մեխանիզմներ, ապա անցնում է զոյատևման մեկ այլ մակարդակի, որը նախապես ծրագրված էր: Այդ մակարդակում արդեն ժողովուրդը հեշտ է կառավարվում՝ չունենալով նախկին բարձր, ընդվզուն ոգին, որը նրան դարերի ընթացքում պահպանել ու առաջնորդել է փորձությունների պահին: Նա արդեն արմատախիլ ծառի է նման, որը երկար ապրել չի կարող:

Այս գործընթացի ծրագիրը մշակվել և ներկայացվել է դեռևս 20-րդ դարի 40-ական թվականներին Կենտրոնական հետախուզական վարչության դոկտրինում: Ահա թե ինչ է գրված այդ փաստաթղթում.

«Կավարտվի Երկրորդ համաշխարհային պատերազմը: Ամեն ինչ կհանդարտվի, և մենք ամեն ինչ՝ ոսկի, նյութական հզորություններ կներդնենք ռուսներին նախամշակելու համար: Ինչպե՞ս: Մենք համախոհներ, դաշնակիցներ և օգնականներ կգտնենք հենց այդ երկրում: Դրվագ առ դրվագ կիրականանա աշխարհի ամենաանհնազանդ ժողովրդի կործանման, իր չափերով վիթխարի ողբերգությունը, նրա ինքնագիտակցության վերջնական ու անդառնալի ոչնչացումը (Կասկածից վեր է, որ նշվածը վերաբերում էր Խորհրդային երկրի բոլոր ժողովուրդներին – ծանոթ. Մ.Կ.):

Գրականությունից ու մշակույթից մենք աստիճանաբար արմատախիլ կանենք նրանց սոցիալական էությունը, մտավորականների մեջ կմարենք ժողովրդական զանգվածների ընդերքում ընթացող պրոցեսներն ուսումնասիրելու և ներկայացնելու ցանկությունը: Գրականությունը, թատրոնը, կինոն կտարածեն ու կզովաբանեն մարդկային ամենաստոր մղումները: Մենք ամեն կերպ կաջակցենք ու կփառաբանենք այսպես կոչված արվեստագետներին, որոնք կպարտադրեն ու մարդկանց գիտակցության մեջ կարմատավորեն սեքսի, բռնության, դավաճանության, մի խոսքով անբարոյականության պաշտամունքը: Պետության կառավարման մեջ կստեղծենք քաոս ու խառնաշփոթ: Մենք աննկատ, բայց ակտիվորեն ու

³ Գարեգին Նժդեհ, *Հատընտիր*, Երևան, «Հայաստան», 2001, էջ 14:

աստիճանաբար կնպաստենք չինովնիկների կաշառակերությանը և անսկզբունքայնությանը: Բյուրոկրատիզմն ու քաշքշուկը կդիտվեն որպես բարեգործություն: Ազնվությունն ու օրինապաշտությունը ծաղրի կենթարկվեն և կհամարվեն անցյալի մնացուկ: Կծաղկեն գռեհկությունն ու լկտիությունը, սուտն ու խաբեությունը, հարբեցողությունն ու թմրամոլությունը, միմյանց նկատմամբ անասնական վախն ու անամոթությունը, դավաճանությունը, ազգայնամոլությունն ու ժողովուրդների միջև թշնամանքը, որոնք մենք աննկատ և ճարպկորեն կսերմանենք:

Միայն շատ քչերը կհասկանան, թե ինչ է կատարվում: Այդ մարդկանց մենք կդնենք անպաշտպան վիճակի մեջ, կդարձնենք ծաղրի առարկա, հնար կգտնենք նրանց մեկուսացնելու և հասարակության թափթփուկ հայտարարելու: Արմատախիլ կանենք, կաղավաղենք ու կոչնչացնենք ժողովրդի բարոյականության հոգևոր արմատները: Այս ձևով մենք սերնդից սերունդ կխախտենք ազգի կայունությունը: Այս ամենը կսկսենք մանկական, պատանեկան տարիքից: Գլխավորապես կհենվենք երիտասարդության վրա, կսկսենք քայքայել, այլասերել ու պղծել նրանց՝ դարձնելով լկտի, բռի ու կոսմոպոլիտ»:

Ինչպես ասում են. «Ով աչք ունի, թող տեսնի, ով ականջ ունի, թող լսի», որ այդ ծրագիրը դեռևս շարունակվում է: Ավելին՝ ընդլայնվել է դրա աշխարհագրությունը: Այս ամենը հասկացող, վերը նշված «շատ քչերից» է Իրանի Նախագահը, որը 2007 թ. Կոլումբիայի համալսարանում արտասանած իր ճառում ասում է. «Օգտվելով գիտական գործիքներից ու միջոցներից՝ խաբում են ազգերին, արդարացնում իրենց քայլերը, նրանց համար ստեղծում ենթադրական թշնամիներ, անապահով միջավայր և վախ, որպեսզի անապահովության ու ահաբեկչության դեմ պայքարի պատրվակով վերահսկեն բոլոր գործերը: Օգտվելով գիտական ժամանակակից միջոցներից՝ հարձակման են ենթարկում տեղական մշակույթները, որոնք արդյունք են ազգերի հազարավոր տարիների ջանքերի, փոխազդեցության, ստեղծագործության ու արվեստի: Փորձում են դրանք ոչնչացնելով՝ մարդկանց զրկել արմատներից և խզել նրանց կապը սեփական պատմության ու արժեքների հետ: Ներշնչելով այնպիսի գաղափարներ, որոնք ազգերին ուղղորդում են դեպի նմանակում ու սպառողականության գերիշխանություն, սերմանում վախի, ստորության, արհամարհանքի ու անկարողության զգացումներ, հիմք են ստեղծում նրանց նյութական ու հոգևոր պաշարների թալանման համար»:

Ուրեմն, ի՞նչ անել գլոբալ այս աղետին դիմակայելու համար: Ինչպե՞ս պաշտպանել մեր երկիրն ու ժողովուրդին անխուսափելի թվացող այդ արհավիրքից:

Պետք է սկսել հիմքից. ակտիվացնել ազգի «իմունային համակարգը»՝ արթնացնելով նրա քնած ազգային ինքնագիտակցությունը, վերոհիշյալ դոկտրինին հակադրել մեր ազգային դոկտրինը՝ ազգային գաղափարախոսությունը, որը պետք է հստակ պատասխանի այն հարցին, **թե ո՞վքեր ենք մենք, որտեղի՞ց ենք եկել, պատմական ի՞նչ առաքելություն ունենք**, այսինքն՝ ճանաչենք ինքներս մեզ, քանզի «Անհնրնաճանաչը, որն իրեն կենդանի մեքենա է համարում և ոչ ավելին, դատապարտված է ապրելու և գործելու իր տկար «ես»-ի աղքատիկ միջոցներով» - գրում է Գարեգին Նժդեհը: Դիմելով հայ երիտասարդներին՝ նա ավելացնում է. «Չկա անկարելին, երբ կա զորեղ և ինքնաճանաչ կամքը: Թագավորը նա՛ է, ով կարող է: Ես ուզում եմ, որ դու լինես թագավոր սերունդ»⁴: Մեծ հայրենասերը համոզված է, որ եթե իմանաս անցյալը՝ կիմանաս ներկայումս գործելու եղանակը, քանզի չկա մի բան, որ այս կամ այն կերպ անցյալում եղած չլինի: Ասպարեզ իջնող յուրաքանչյուր սերնդի պարտքն է ժառանգել նախնյաց հոգևոր արժեքները: Այդ գա-

⁴ Գարեգին Նժդեհ, *Հատընտիր*, էջ 58:

ղափարախոսությունը պետք է քարոզել նախակրթարաններից սկսած: Պետք է ազգային առաջնահերթ ռազմավարական խնդիր դարձնել կրթական համակարգի բարեփոխումները: «Եսականությունը հաղթահարած՝ դեպի բարեկրթություն և հայրենապաշտություն. ահա սա պետք է լինի դաստիարակություն իրականացնող հաստատությունների խնդիրը»: Բոլոր դպրոցներում որպես պարտադիր առարկա պետք է մտցնել Հայ Առաքելական Եկեղեցու պատմությունը և նրա վարդապետությունը, քանի որ քրիստոնեական բարեկրթությունը կենսական ուժի աղբյուր է, որը պետք է ծառայեցնել ազգին ու ազգային վերելքին: Լրատվամիջոցներով ակտիվորեն պետք է պրոպագանդել ազգային մշակույթը, որի կրողը պետք է դառնա յուրաքանչյուր հայ երիտասարդ: Մատաղ սերնդի մեջ պետք է զարգացնել ազգային արժանապատվության զգացումը, քանզի թերարժեքության բարդույթից ազատագրված սերունդը միայն կարող է դիմակայել ներկայիս մարտահրավերներին: Երիտասարդների սեփականությունը պետք է դարձնել մեր ազգի մեծերի հայրենամկեր գործերն ու գաղափարները, դրանով ամրապնդելով ու բարձրացնելով ազգային ոգին, քանի որ զորավոր ոգին ազգի համար ունի առաջին հերթին ինքնապաշտպանական իմաստ: Ուստի, Գարեգին Նժդեհը դիմելով հայ երիտասարդին, հորդորում է.

«Թող քո հաճույքները լինեն մաքուր, ողջապահիկ, բարոյական: Կրքերն ու կարիքները ծառաներ պիտի լինեն և ոչ թե տեր ու բռնակալ: ...Սանձարձակ կյանքով ապրող երիտասարդներն ի վիճակի չեն պաշտպանելու իրենց Հայրենիքը: Պարզակեցությանը և մշտատև ջանասիրությամբ էին հզոր և անպարտելի Հին Հելլադան, Սպարտան, Հռոմը...: Բայց երբ մի օր հույնի ու հռոմեացու մեջ տկարացավ պարզակեցության ոգին, երբ այդ առնական և խրոխտ ժողովուրդները մեղկացան, ճոխության ու քնքշանքի մեջ ընկան, կորան բարբարոսների կրունկի տակ: Ահա թե ինչու քո սերունդը, հայ՛ երիտասարդ, պիտի լինի պարզակյաց, ազատ կարիքների ու կրքերի լծից՝ ուժեղ լինելու համար⁵: ...Դու՛ պիտի սպանես կեղծիքի հրեշը, որ սպառնում է մեր ազգի նյութական ու բարոյական գոյությանը...: Չկա ճշմարտություն մեր կյանքում, դրա համար էլ տոբեղ են մեր բարքերը և խոսքան՝ մեր հոգիները: Չկա ճշմարտություն, բայց կա փիլիսոփայող եսականություն, ատելություն, նախանձ, փոքրոգություն, քաղաքական շաղակրատանք: Կա այն ամենը, որը դժոխքն իսկապես դժոխք է դարձնում: Թագավորող կեղծիքից հալածական է ճշմարտությունը մեր իրականությունից: Այդ կեղծիքի պայմաններում, հուրախություն մեր թշնամիների, շարունակվում է ներքին իրարակեցությունը⁶:

Ազգի փրկության ու ապագայի մտահոգությամբ են հնչում նաև Վահան Տերյանի տողերը. «Ազգը միայն արտաքին ուժերի զորությամբ, իրերի արհեստական դասավորությամբ չի ստեղծվում, այլև իր անդամների ներքին մտավոր-հոգեկան կերպով: Պետք է բացի արտաքին հնարավորություններից լինի և ներքին մի զորություն, մի հոգևոր մղում, որ մարդկանց համախմբումը ազգ է դարձնում:

Չպետք է կամենանք մեր հույսը և ապագան հիմնել «նյութական Հայաստան» գաղափարի վրա, այլ պիտի տենչանք ու աշխատենք «հոգևոր Հայաստանի» համար: Հոգևոր Հայաստանի կառուցումը ծանր ու տևական աշխատություն է պահանջում, անթիվ կյանքերի տոկուն հավատ և գիտակցություն, անարյուն, բայց ազնիվ, գուցե ավելի դժվար, ավելի ահավոր զոհաբերում, քան արյան զոհաբերումը:

Քննեցե՛ք ձեր սիրտը և նայեցե՛ք, թե կա՞ արդյոք այնտեղ հավատ, որով պիտի կենդանանա մեր հոգևոր Հայաստանը: Եթե չկա, ապա զուր են ձեր ջանքերը նյութական Հայաստանի համար... Նա չի կենդանանա, նա հոգով միայն կարող է կենդանի լինել:

⁵ Գարեգին Նժդեհ, *Հատընտիր*, էջ 100:

⁶ Գարեգին Նժդեհ, *Հատընտիր*, էջ 86-87:

Ես հավատում եմ, կլինի հոգևոր Հայաստանը, կենդանի կլինի մեր Հայրենիքը, ուրեմն կենդանի կլինի և այն Հայաստանը, որի համար մեր ժողովուրդը այսօր թափում է իր արյունը»:

Այս խոսքը գրվել է հարյուր տարի առաջ սակայն այսօր էլ հրատապ է և շարունակում է հուզել ազգի ներկայով ու ապագայով ապրող յուրաքանչյուր **Մտածող** հայի: Ազգի փրկությունը տեսնելով երիտասարդության մեջ՝ մեր մեծերը գտնում են, որ եթե հայ երիտասարդությունը հոգեփոխվի և հոգեփոխի հայ ժողովրդին, նա տերը կդառնա իր Մեծ Հայրենիքի, նա հոգեփոխվելով կստանա իր հոգեկան անհրաժեշտ կառուցվածքը: *«Ճշմարտության արևը կը լուսավորի մեր հոգևոր կյանքը, փրկելով մեզ մտավոր կուրությունից: Ստեղծագործ ոգևորության մի հեղեղ կանցնի հայ աշխարհի վրայով, աճեցնելով հոգիներն ու կամքերը: Հայ մարդը՝ ծանոթ ինքնաճանաչման օրենքներին, կճարգացնի իր ներքին թաքուն ուժերը, իր ներքին մարդը, որի բաղդատմամբ ինքն այժմ թզուկ է միայն: Կը հրապարակախոսեն վսեմ ու խանդավառ շրթունքներ, և երեկի՝ հակասություններով այնքան հարուստ կյանքը կհմաստնանա բարոյական ճշմարտություններով»⁷:*

Ահավասիկ, մեր ազգի այս և մյուս մեծերի կյանքի փորձով և փիլիսոփայական խորաթափանցությամբ ձեռք բերված իմաստությունները պետք է դառնան մեր ազգային դոկտրինի հիմքը, որի վրա պետք է կառուցվի և իրականացվի սերնդի դաստիարակության ծրագիրը:



Բովանդակություն

⁷ **Գարեգին Նժդեհ**, *Հատընտիր*, էջ 88: